


# Արտասահմանյան գրականություն



**Օ.ՀԵՆՐԻ**

(1862-1910)



## Կյանքն ու ստեղծագործությունը

Օ. Հենրին աշխարհի ամենահայտնի կարճ պատմվածքների հեղինակներից մեկն է: Օ. Հենրի իսկական անունը Ուիլյամ Սիդնի Փորթեր էր. ծնվել է 1862 թ. սեպտեմբերի 11-ին Գրինսբորո քաղաքում (Հյուսիսային Կառոլինա նահանգ): Առաջին գրական փորձերը վերաբերում են 1880-ական թթ. սկզբներին: Օսթինում 1894 թ. Փորթերը սկսում է հրատարակել «Ռոլինգ սթուն» հումորային շաբաթաթերթը՝ այն գրեթե ամբողջությամբ լցնելով իր ակնարկներով, կա-

տակներով, բանաստեղծություններով և նկարներով: Մի տարի անց շաբաթաթերթը փակվում է: Միաժամանակ Փորթերին ազատում են աշխատանքից և ենթարկում դատական պատասխանատվության՝ հայտնաբերված պակասորդի պատճառով, թեև այն փոխհատուցվում է իր հարազատների կողմից: Ջեդարարության մեջ մեղադրվելուց հետո նա դիմում է փախուստի և մոտ կես տարի թաքնվում Հոնոլուլուում, այնուհետև՝ Հարավային Ամերիկայում: Վերադառնալով ԱՄՆ՝ դատապարտվում է և բանտարկվում Օհայո նահանգի Կոլումբուս քաղաքի բանտում, որտեղ անցկացնում է 3 տարի (1898 - 1901 թթ.):

Բանտում եղած տարիներին Փորթերը սկսում է գրել կարճ պատմվածքներ, և ենթադրվում է, որ իր կեղծանունը նա հորինել է հենց այնտեղ: Օ. Հենրիի կարճ պատմվածքները հայտնի են իրենց անակնկալ ավարտով և հումորով: Հայտնի լինելով հանդերձ՝ նա նաև հարբեցող էր: Կյանքի վերջին տառապել է լյարդի ցիռոզից և շաքարախտից: Մահացել է 1910 թ. հունիսի 5-ին Նյու-Յորքում, 47 տարեկան հասակում:

## Երազը

Մյուրեյը երազ տեսավ.

Եվ հոգեբանները, և գիտնականները ընկնում են գուշակությունների և ենթադրությունների մեջ՝ փորձելով հասկանալ մեր անշոշափելի «Ես»-ը՝ «մահվան երկվորյակ եղբոր՝ քնի» արքայությունում թափառելիս: Այս պատմությունը չի ցանկանում լույս սփռել չհետազոտված հարցերի վրա: Այն պարզապես Մյուրեյի քնի նկարագրությունն է: Առավել վառ կարևոր երազներից մեկն այն է, որը երազում քեզ թվում է մի քանի ամիս կամ տարիներ, սակայն այն ընդամենը տևում է մի քանի րոպե կամ վայրկյան:

Մյուրեյը նստած էր մահվան դատապարտվածների առանձնացված բանտախցում: Էլեկտրական .... լամպը, որը կախված էր միջանցքի առաստաղից, վառ լուսավորում էր նրա սեղանը: Սպիտակ թղթի վրա մրջյունը վայրի ձևով այստեղից անտեղ էր գնում, այն ժամանակ, երբ Մյուրեյը ծրարով փակում էր նրա ճանապարհը: Գիշերը ժամը ութին էլեկտրականության միջոցով կատարվելու էր մահապատիժը: Մյուրեյը ժպտալով նայում էր միջատների մեջ ամենախմաստուն մրջյունին:

Կային նաև ուրիշ յոթ մահապատժի ենթարկվածներ: Այն պահից սկսած, երբ Մյուրեյը գտնվում էր այստեղ, նա տեսավ, թե ինչպես են երեքին տանում ըստ պայմանավորվածության: Նրանցից մեկը խելագարվեց և իրեն խփեց, ինչպես թակարդն ընկած գայլ, երկրորդը պակաս խելագար չէր, բարձր աղոթում էր, երրորդը կամքից թույլ էր, ուշագնաց եղավ, և նրան տախտակին կապված տեղափոխեցին: Մյուրեյը մտածում էր, թե ինչպես են իր սիրտը, դեմքը և ոտքերը հանդիպելու պատժին: Այս երեկո նրա ժամն էր: Ժամը ութը կլիներ:

Երկու շարք այն կողմ, նրա բանտախցի դիմաց իտալացի Բոնիֆիցիոյի բանտախուցն էր, որը սպանել էր իր կնոջը և երկու ոստիկանի, որոնք նրան ուզում էին ձերբակալել: Մյուրեյը ժամերով նրա հետ շաշկի էր խաղում՝ յուրաքանչյուրն ասելով իր քայլը իր անտեսանելի հակառակորդին միջանցքի միջով:

Լսվեց Բոնիֆիցիոյի հզոր ձայնը երգեցիկ ակցենտով.

-Հէյ, մաեստրո Մյուրեյ, ինչպե՞ս եք Ձեզ զգում, երևի լմվ:

-Լավ, Բոնիֆիցիո,- ասաց Մյուրեյը՝ թույլ տալով մրջյունին նստել ծրարի վրա և զգուշորեն զցելով նրան քարե հատակին:

-Այդպես էլ պետք է լինի, մաեստրո Մյուրեյ: Մեր նմանները պետք է մահանան ինչպես տղամարդ: Իմ ժամկետը լրանում է հաջորդ շաբաթ: Հիանալի է: Հիշե՛ք, մաեստրո, ես վերջին խաղը շաշկիով հաղթել եմ Ձեզ: Միգուցե մենք

էլի կխաղանք միասին: Ես չգիտեմ : Միգուցե այնտեղ, որտեղ մեզ կուղարկեն:

Բենիֆիցիոյի կոպիտ փիլիսոփայությանը հետևեց երաժշտական մեծ ծիծաղի պայթյուն, տաքացավ Մյուրեյի փայտացած սիրտը: Այո, բայց Բենեֆիցիոյին մնում էր ապրելու ևս մեկ շաբաթ:

Բանտարկյալները լսեցին բարձր դարպասների ծանոթ ձայները այն ժամանակ, երբ բացվում էր միջանցքի հետևի դուռը: Երեք մարդ մոտեցան Մյուրեյի բանտախցին և բացեցին այն:

Նրանցից երկուսը բանտի պահակներից էին, երրորդը Լեոնն էր: Մյուրեյի ընկերը և հարևանը՝ հին և ոտաբոբիկ ժամանակներից: Ոչ, հիմա ուրիշ է, հիմա նա պատվելի Լեոնարդ Ուինսթոնն էր:

-Ես հասել եմ քահանայի պաշտոնի, - ասաց նա՝ ամուր սեղմելով Մյուրեյի ձեռքը: Ձախ ձեռքում նա պահում էր ոչ մեծ Աստվածաշունչը՝ մատով ցույց տալով անհրաժեշտ էջը:

Մյուրեյը ծիծաղեց և սկսեց կարգի հրավիրել երկու-երեք գիրք, մի քանի գրիչ իր սեղանի վրա: Նա կխոսեր, բայց ոչ մի հարմար խոսք մտքին չէր գալիս:

Բանտարկյալները մկրտել էին բանտի այդ մասը ութսուն մետր երկարությամբ և քսանյոթ մետր լայնությամբ «անորոշ դժոխքում»: Կանգնած պահակը՝ մեծ, անկիրթ լավ մարդ, հանեց իր գրպանից վիսկու շիշը և մեկնեց դեպի Մյուրեյը՝ ասելով.

-Սա այն է, հասկանո՞ւմ ես: Իսկական գործը նրանց համար, ում պետք է թարմացնել: Եվ, հասկանում ես, սրանից վնաս չկա, պարզապես սովորություն է:

Մյուրեյը խմեց շիշից:

-Այ այդպես,- ասաց պահակը,- մի քիչ ջղերը ամրացնող նյութ, և ամեն ինչ մետաքսի պես հարթ կգնա:

Նրանք դուրս եկան միջանցք: Եվ նրանցից յուրաքանչյուրը հասկացավ, որ արդեն ժամը ութն էր, և ժամը 8-ին Մյուրեյի պատժի ժամն էր: Այնտեղ կար նաև պատիժն իրականացնելու արիստոկրատ ձև: Մարդը, որն ազատ սպանում է, ջարդում է իր թշնամուն կամ հետապնդում նրան, լցվում է պարզ զգացումներով և տրամադրվում մարտական, ունենում է անհարգալից վերաբերմունք:

Այսպիսով՝ յոթ դատապարտվածներից միայն երեքը հրաժեշտի բացականչություններ արեցին Մյուրեյին, այն ժամանակ, երբ նա միջանցքով քայլում էր երկու պահակների ուղեկցությամբ՝ Բենիֆիցիոն, Մարվինը, որոնք սպանել էին բանտապետին՝ փորձելով բանտից փախչել, Բասետը՝ երկաթուղային գողը, որն արել էր դա, քանի որ մեքենավարը հրաժարվել էր ձեռքերը վեր բարձրացնել: Մնացած չորսը բանտախցում լուռ փակված էին՝ իրենց զգալով թշվառ «անորոշ

դժոխք»-ի խմբում:

Մյուրեյը զարմացել էր իր հանգիստ պահվածքից և անտարբերությունից: Պատժի սենյակում հավաքվել էր մոտավորապես 20 մարդ, բանտի ղեկավարությունը, թերթերի լրագրողները և հյուրերը, ում հաջողվել էր...

Այստեղ, մահապատժի հենց մեջտեղում, մահվան ձեռքը ընդհատեց Օ. Հենրիի վերջին պատմությունը: Նա ուզում էր գրել այդ պատմությունը բոլորովին տարբեր մյուս պատմվածքներից:

- Ես ուզում էի ցույց տալ հասարակությանը,- ասում էր Հենրին,- որ ես կարող եմ գրել մի նոր բան, այն, ինչը նոր է ինձ համար, պատմություն առանց ժարգոնի, իսկական դրամատիկական սյուժեով՝ մեկնաբանելով այդ ոգով, որը մոտ կլինի իմ մտքին իրական պատմություն գրելու համար: Մինչև իսկական պատմություն սկսելը նա համառոտ նշում է, թե ինչպես էր նախատեսում զարգացնել այն: Մյուրեյը մեղավոր էր մի հրեշավոր արարքի համար, նա սպանել էր իր սիրուհուն, սպանություն խանդի պատճառով: Սկզբում նա մահապատժին միանգամայն հանգիստ է նայում և նույնիսկ անտարբեր իր ճակատագրի նկատմամբ: Երբ նա մոտեցավ էլեկտրական աթոռին, նրան տիրեց տարօրինակ անիրականության զգացում: Մահապատժի ամբողջ տեսարանը, վկաները, հանդիսատեսի նախապատրաստումը նրան անիրական էին թվում: Նրա գլխում մի միտք էր պտտվում, այն, որ տեղի է ունենում մի մեծ ահավոր սխալ: Ինչու՞ են նրան կապում աթոռին: Ինչ է նա արել: Ինչ հանցանք է նա գործել: Այդ մի քանի բոպեններին, երբ նրան կապում էին աթոռին, իր մտքով տեսիլք է անցնում: Նա երազ է տեսնում: Նա տեսնում է փոքր փայտե քրթեջ, լուսավոր, լցված արևի շողերով, բույն դրած ծաղիկների մեջ: Նա տեսնում է մի կնոջ և երեխայի: Նա խոսում է նրանց հետ և պարզում, որ նրանք իր կինն ու երեխան են, իսկ քրթեջը՝ իր տունը: Այսպիսով՝ այս ամենը սխալ էր: Ինչ-որ մեկը ահավոր անուղղելի սխալ էր գործել: Մեղադրանքը, դատարանը, մահապատժի ենթարկելը էլեկտրական աթոռով, դա երազ է: Նա գրկում է կնոջը և համբուրում երեխային: Ահա այստեղ է երջանկությունը, իսկ այն երազ էր: Բայց այստեղ՝ բանտապահի հրամանով, բաց է թողնվում ճակատագրական հոսանքը: Եվ Մյուրեյը տեսել էր մի սխալ երազ:

## Տարօրինակ պատմություն

Օսթենի հյուսիսային մասում մի ժամանակ ապրում էր Սմոթերսների ազնիվ ընտանիքը: Ընտանիքի անդամներն էին Ջոն Սմոթերսը, նրա կինը, նրանց հինգամյա դուստրը և կնոջ ծնողները՝ կազմելով վեց մարդ քաղաքի բնակչության մեջ, սակայն փաստացի հաշվարկով ընդամենը երեքն են:

Մի երեկո, ընթրիքից հետո, փոքրիկ աղջկան սկսեցին տանջել սուր ծակոցները, և Ջոնը շտապեց քաղաք՝ դեղորայք ձեռք բերելու:

Նա այլևս չվերադարձավ:

Փոքրիկ աղջիկը ապաքինվեց և ժամանակի ընթացքում հասունացավ ու դարձավ կանացի:

Մայրը շատ վշտացավ ամուսնու անհետանալու պատճառով, և մոտ երեք ամիս առաջ էր, որ նա կրկին ամուսնացավ և տեղափոխվեց Սան Անտոնիո:

Փոքրիկ աղջիկը նույնպես ամուսնացավ ժամանակին, և մի քանի տարի անց նա նույնպես ունեցավ մի փոքրիկ աղջիկ, որը դարձավ հինգ տարեկան: Այն ժամանակ նա դեռ ապրում էր այն նույն տանը, որտեղ նրանք բնակվում էին, երբ իր հայրը գնաց ու չվերադարձավ: Մի գիշեր, ուշագրավ զուգադիպությամբ, նրա փոքրիկ աղջկան սկսեցին տանջել սուր ծակոցները Ջոն Սմոթերսի անհետացման տարելիցին, որը կլիներ նրա պապիկը, եթե ողջ լիներ և ունենար մշտական աշխատանք:

-Ես կգնամ քաղաք և դեղորայք կբերեմ նրա համար, - ասաց Ջոն Սմիթը (նա ոչ այլ ոք էր, քան նրա ամուսինը):

-Ոչ, ոչ, սիրելի Ջոն, - բացականչեց կինը: Դու նույնպես կարող ես անհետանալ և մոռանալ վերադառնալ:

Այսպիսով Ջոն Սմիթը չգնաց, և նրանք միասին նստեցին փոքրիկ Փենսիլի անկողնու մոտ: Մի քիչ անց Փենսիլի ավելի վատացավ, և Ջոն Սմիթը կրկին փորձեց գնալ դեղորայքի, սակայն կինը չթույլատրեց նրան:

Հանկարծ դուռը բացվեց, և մի ծեր մարդ, կորացած և կռացած, երկար, սպիտակ մազերով, մտավ սենյակ:

-Բարև, ահա պապիկը, - ասաց Փենսիլին: Նա անմիջապես ճանաչեց նրան:

Ծերունին հանեց դեղի շիշը գրպանից և մի լիքը գդալ տվեց Փենսիլին: Նա անմիջապես ապաքինվեց:

-Ես մի փոքր ուշացա, - ասաց Ջոն Սմոթերսը, - քանի որ փողոցում մեքենայի էի սպասում:

## Հնացած բուլկիներ

Միսս Մարթա Մեչենը անկյունում ուներ մի փոքրիկ հացի փուռ (այնտեղ, որտեղ երեք քայլ բարձրանալու և դուռը բացելու ժամանակ զնգզնգում է զանգը):

Միսս Մարթան 40 տարեկան էր, նրա բանկային գիրքը ցույց էր տալիս, որ նա բանկում ունի երկու հազար դոլար, և, բացի դրանից, նա ուներ երկու կեղծ ատամ և կարեկցանքով լի բարի սիրտ: Շատերն են ամուսնացել, որոնց շանսերը դա անելու համար ավելի քիչ էին, քան միսս Մարթայինը:

Մի գնորդ էր գալիս հացի փուռ շաբաթը երկու կամ երեք անգամ, որը սկսեց հետաքրքրել նրան: Նա միջին տարիքի տղամարդ էր՝ ականցներով և շականակագույն մորուքով՝ կոկիկ հարդարված:

Նա խոսում էր անգլերեն, սակայն գերմանական ակցենտով: Նրա հագուստը մաշված էր և տեղ-տեղ նաև կարկատված, իսկ մյուս մասերը պարկանման էին և ճմռթված: Սակայն նա կոկիկ էր երևում և աչքի էր ընկնում լավ շարժումով:

Նա միշտ գնում էր երկու հատ հնացած հաց: Թարմ հացը արժեր 5 ցենտ: Իսկ հնացած հացը արժեր երկու ցենտ: Նա երբեկ ոչնչի համար չէր այցելում փուռ, բացի հնացած հացից:

Մի անգամ միսս Մարթան նկատեց կարմիր և շագանակագույն ներկի հետք նրա մատների վրա: Նա վստահ էր, որ գնորդը նկարիչ էր և միևնույն ժամանակ՝ շատ աղքատ: Անկասկած, նա ապրում էր ձեռնահարկում, որտեղ նկարում էր իր նկարները, ուտում էր հնացած հացը և մտածում էր լավ բաների մասին, միսս Մարթայի հացի փոռից օգտվելու մասին:

Հաճախ, երբ միսս Մարթան նստում էր իր պատրաստած կոտլետների և թեթև բլիթների, ջեմի ու թեյի հետ, նա հոգոց էր հանում և ցանկանում էր, որ նուրբ շարժումով նկարիչը իր հետ համտեսեր իր պատրաստածը, ոչ թե ուտեր իր չոր հացի կտորը իր ցուրտ վերնատանը:

Միսս Մարթայի սիրտը, ինչպես դուք արդեն գիտեք, կարեկից էր:

Որպեսզի ստուգի իր տեսակետը նրա զբաղմունքի մասին, նա իր սենյակից բերեց մի նկար, որը գնել էր աճուրդի ժամանակ, և դրեց այն դարակների դիմացը՝ հացի վաճառատեղանի հետևում:

Նկարում Վենետիկյան տեսարանն էր: Պալլացիոյի հոյակապ մարմարը (այդպես երևում էր նկարում) գտնվում էր առաջին պլանում: Այլ տեսանկյունից կային գոնդոլներ (տիկնոջ հետ, որը իր ձեռքը քաշում էր ջրի վրայից), ամպեր, երկինք, և չափից ավելի chiaro-oscuro: Ոչ մի արվեստագետ չէր կարող չնկատել դա:

Երկու օր անց գնորդը եկավ:

-Երկու հնացած հացի կտոր, խնդրում եմ:

Դուք այստեղ գեղեցիկ նկար ունեք, տիկին,- ասաց նա մինչ Մարթան փաթեթավորում էր հացը:

-Այո,- ասաց միսս Մարթան՝ վայելելով իր սեփական խորամանկությունը:- Ես այնքան եմ հիանում արվեստագետներով և (ոչ, այսքան վաղ պետք չէր ասել «արվեստագետներին») և նկարներով,- նա փոխեց թեման,- իսկ դու կարծում ես, որ սա լավ նկար է:

-Այդքան էլ լավը չէ: Համարձակ հեռանկար, դա ճիշտ չէ,- Ցտեսություն, տիկին:

Նա վերցրեց հացը, խոնարհվեց և շտապեց դուրս:

«Այո, նա պետք է որ նկարիչ լինի»: Միսս Մարթան իր նկարը ետ տարավ իր սենյակ:

Ինչքան նուրբ և սիրով էին փայլում նրա աչքերը ակնոցների հետևում, ինչպիսի լայն ճակատ ունի նա, որպեսզի դատի հեռանկարը մի հայացքով և ապրի հնացած հացով, սակայն հանճարներին բնորոշ է պայքարը, քանի դեռ նրանց չեն նկատում:

Հաճույք և ուրախություն էին պատճառում միսս Մարթայի խոսքերը:

Ինչ կնշանակեր արվեստի և նկարների հեղինակների համար, եթե նրանք բանկում ունենային երկու հազար դոլար, հացի փուռ և կարեկից սիրտ, սակայն դրանք ուղղակի ամենօրյա երազներ են, միսս Մարթա:

Հիմա հաճախ, երբ նա գալիս էր, սկսում էր զրուցել ցուցափեղկի միջով: Նա շարունակում էր հնացած հաց գնել: Երբեք չէր գնում տորթ, կարկանդակ կամ իր սիրելի «Սալի լունս»:

Նա կարծում էր, որ գնորդը սկսել է ավելի նիհարել և հուսալքվել: Նրա սիրտը ցավում էր, ուզում էր ավելացնել ինչ-որ լավ ուտեստ նրա աղքատ գնումների մեջ, սակայն նրա քաջությունը չէր հերիքում ինչ-որ քայլ ձեռնարկելու: Նա չէր համարձակվում անարգել ինքն իրեն: Նա գիտեր արվեստագետների հպարտության մասին: Միսս Մարթան հաշվիչի հետևում սկսեց հազնել իր կապույտ կետագծերով մետաքսյա թալիումը: Հետևի սենյակում նա պատրաստել էր սերմացու սերկևիլի և բուրյաթի համադրությամբ խորհրդավոր ուտեստը: Շատ մարդիկ այն օգտագործում են դեմքի համար:

Մի օր հաճախորդը եկավ, ինչպես միշտ դրեց մետաղադրամը ցուցափեղկի վրա և ցանկացավ իր հնացած հացը: Երբ միսս Մարթան սպասարկում էր նրան, այնտեղ լավեց մեծ աղմուկ և զրնգոց, անցավ հրշեջ մեքենան:

Հաճախորդը անմիջապես շտապեց դռան մոտ՝ տեսնելու, թե ինչ է կա-



տարվում: Հանկարծ միսս Մարթան ոգեշնչված՝ օգտվեց հնարավորությունից:

Ներքևի դարակում, հաշվիչի հետևում կար մի ֆունտ թարմ կարագ, որը 10 ռոպե առաջ այդտեղ էր թողել կաթնավաճառը: Միսս Մարթան հացի դանակով կտրատեց հնացած հացի մեջտեղը և բավական շատ կարագ դնելով այնտեղ՝ ամուր սեղմեց հացը:

Երբ հաճախորդը ևս մեկ անգամ շրջվեց, նա փաթաթում էր դա թղթով:

Այն բանից հետո, երբ նա գնաց, անսովոր հաճելի փոքրիկ գրույցից հետո, միսս Մարթան ժպտաց ինքն իրեն, սակայն այս անգամ՝ թեթև սրտի բաբախումով:

Արդյոք նա չափազանց համարձակ էր: Միթե նա կվիրավորվեր: Անկասկած, ոչ: Այնտեղ ուտելու մասին խոսակցություն չեղավ: Կարագը անպարկեշտության նշան չէ:

Այդ օրը երկար ժամանակ նա մտածում էր այդ դեպքի մասին: Պատկերացնում էր այն տեսարանը, երբ գնորդը կբացահայտեր իր փոքրիկ խաբեությունը:

Նա վայր կդնի իր խոզանակը և գունատախտակը: Այնտեղ պետք է լիներ իր պատկերակալը այն նկարի հետ, որը նա նկարել էր, և որի պատկերը վեր էր քննադատությունից:

Նա կպատրաստի իր նախաճաշը՝ չորի հաց և ջուր: Նա կբաժանի բոքոնը մի քանի մասի, օհ:

Միսս Մարթան կարմրեց: Նա կմտածի այն ձեռքի մասին, որը դրել է կարագը այնտեղ, միթե նա...

Լսվեց մուտքի դռան զանգի անախորժ ձայնը: Ինչ-որ մեկը բարձր աղմուկ բարձրացնելով՝ առաջ էր գալիս:

Միսս Մարթան շտապեց այնտեղ: Երկու տղամարդ էին անտեղ: Մեկը՝ երիտասարդ տղա էր, որը ծխամորճ էր ծխում, մի մարդ, ում նա երբեք չէր տեսել: Մյուսը իր արվեստագետն էր:

Նրա երեսը ալ կարմիր էր, նրա գլխարկը թեքված էր հետ, նրա մազերը ահավոր խառնված էին: Նա սեղմեց իր երկու բռունցքը և զայրույթով նայեց միսս Մարթային:

«Դումկոֆ»՝ բղավեց նա ծայրահեղ հնչողությամբ, իսկ հետո՝ «Թաուսեն-դոնֆեր» կամ ինչ-որ նման բան գերմաներեն:

Երիտասարդը նրան փորձեց հեռու քաշել.

-Ես չեմ պատրաստվում գնալ,- զայրույթով ասաց նա,- ես պետք է խոսեմ նրա հետ:

Նա ուժեղ հարվածեց միսս Մարթայի վաճառասեղանին:

-Դուք փչացրիք ինձ,- բացականչեց նա, նրա ակնոցների հետևում երևում էին կապույտ բոցափայլ աչքերը:

-Ես կասեմ Ձեզ: Դուք նման եք ծեր կատվի:

Միսս Մարթան թույլ հենվեց դարակներին: Երիտասարդը բռնեց գնորդի օձիքից:

- Դե վերջացրու,- ասաց նա,- Դուք բավականաչափ խոսեցիք: Նա զայրացած դուրս տարավ նրան դեպի մայթ և անմիջապես ետ եկավ:

- Կռահեք, թե ինչի մասին էր նա խոսում, տիկին,- ասաց նա,- ինչն էր այս վիճաբանության պատճառը: Նա Բլումբերգերն է, ճարտարապետական գծագրող է: Ես աշխատում եմ իր հետ նույն գրասենյակում:

Նա երեք ամիս է, ինչ քրտնաջան աշխատում էր իր նախագծի վրա, որը նոր քաղաքի սրահի գծագիրն էր: Դա մրցակցային նախագիծ է: Նա երեկ արդեն մեկնել էր գծերը: Դուք գիտեք, որ գծագրողները միշտ իրենց գծագրությունները սկզբում կատարում են մատիտով: Երբ այն պատրաստ է լինում, նա ջնջում է մատիտով արած գծերը հնացած հացի փշուրներով: Դա ավելի լավ է, քան հնդկական ռետինը:

Բլումբերգերը հացը այստեղից է գնում: Լավ, տիկին, հիմա Դուք արդեն գիտեք, որ կարագը փչացրեց ամեն ինչ, հիմա Բլումբերգերի նախագիծը ոչնչի պետք չէ:

Միսս Մարթան գնաց հետևի սենյակը: Հանեց իր կապույտ կետավոր մետաքսյա զգեստը և հագավ իր հին շագանակագույն սերգը, որը նա միշտ հագնում էր: Ապա պատուհանից դուրս թափեց սերկևիլի սերմը ուղիղ աղբամանի մեջ: